ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 10>> դեկտեմբերի 2012 թվականի N:329 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՌԻՃԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի <<բ>> կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի N 624 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգի>> 14-րդ կետի <<ե>> ենթակետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու մասին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 27-ի N 89-Ա որոշման 1-ին կետով ստեղծված հանձնաժողովի կողմից քաղաքաշինության բնագավառում Հառիճի համայնքի ղեկավարի գործունեության պլանային ստուգման արդյունքում կազմված 2012 թվականի նոյեմերի 29-ի արձանագրությունը (համաձայն հավելվածի).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հառիճի համայնքի ղեկավարին առաջարկել՝

ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 479 որոշմամբ հաստատված <<Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգի>> պահանջների կատարումը:

2. Ձեռնարկված միջոցների մասին 10-օրյա ժամկետում տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ համեմատած է